TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

«04» հունիսի 2024թ. N 78-Լ

Հ Ր Ա Մ Ա Ն
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՄԵՏՐՈԲՈՒՍ» ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի թ) կետով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության «ՄԵՏՐՈԲՈՒՍ» գովազդային վիճակախաղի կանոնները՝ համաձայն սույն հրամանի հավելվածի (հավելվածը կցվում է):
2. Մարքեթինգի դեպարտամենտի ղեկավար Զարինա Ստեփանյանին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ապահովել հաճախորդների տեղեկացումը սույն հրամանով հաստատված «ՄԵՏՐՈԲՈՒՍ» գովազդային վիճակախաղի կանոններին:
3. Ավագ իրավաբան Էլեն Ասատրյանին՝ սույն հրամանի ստորագրման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության բոլոր ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքային էլեկտրոնային փոստի հասցեներին իրազեկման նպատակով ուղարկել սույն հրամանը:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գլխավոր տնօրեն՝ **Ա. Ղազարյան**

Ստորագրություն՝ _____
Հաստատված է Wrike համակարգով

«04» հունիսի 2024թ.
ք. Երևան

«ՄԵՏՐՈԲՈՒՍ» ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. «ՄեՏրոԲուս» գովազդային վիճակախաղի նկարագիր

1.1. «ՄեՏրոԲուս» գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Գովազդային վիճակախաղ) կազմակերպվում է «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գովազդային քաղաքականության շրջանակներում՝ Ընկերության Telcell Wallet հավելվածով մատուցվող ծառայությունները գովազդելու նպատակով:

1.2. Գովազդային վիճակախաղի կանոնները սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ:

1.3. Օֆերտայի գործողության ժամկետը համընկնում է Գովազդային վիճակախաղի անցկացման ժամկետին: Կանոնները կարգավորվում և մեկնաբանվում են, ինչպես նաև Կանոններից բխող բոլոր հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

1.4. Գովազդային Վիճակախաղին կարող են մասնակցել գործունակ ֆիզիկական անձինք, ովքեր ընդունել են սույն օֆերտան: Սույն օֆերտան համարվում է ընդունված, եթե ֆիզիկական անձը Կանոններով սահմանված կարգով ստացել է տոմս և ակտիվացրել է այն, եթե Կանոններով սահմանված է տոմսի ակտիվացման պահանջ:

1.5. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի հրաժարվել Գովազդային վիճակախաղին մասնակցել՝ պաշտոնական որևէ եղանակով դիմելով Ընկերությանը կամ կապ հաստատելով Ընկերության զանգերի կենտրոն: Նշված եղանակներից որևէ մեկով Գովազդային վիճակախաղից հրաժարվելուց հետո մինչև այդ ստացված տոմսերը հեռացվում են և այլևս չեն մասնակցում Գովազդային վիճակախաղին, իսկ Գովազդային վիճակախաղին մասնակցությունից հրաժարված անձն այլևս Կանոններով սահմանված դեպքերում չի ստանում տոմսեր: Գովազդային վիճակախաղին մասնակցությունից հրաժարված անձն իրավունք ունի վերսկսել Գովազդային վիճակախաղին մասնակցությունը՝ պաշտոնական որևէ եղանակով դիմելով Ընկերությանը կամ կապ հաստատելով Ընկերության զանգերի կենտրոն, ինչի դեպքում, սակայն, նախկինում հեռացված տոմսերն այլևս չեն վերականգնվում:

2. Հիմնական հասկացություններ

2.1. **Telcell Wallet (այսուհետ՝ նաև TW հավելված)՝** էլեկտրոնային փողով վճարումների ընդունման, դրամական փոխանցումների և առցանց այլ գործարքների կատարման համար Ընկերության թողարկած բջջային հավելված:

2.2. **Մասնակից՝** ցանկացած ֆիզիկական անձ, ով Գովազդային վիճակախաղի ժամկետի ընթացքում սույն Կանոնների համաձայն կատարել է վճարում, ստացել է տոմս, սահմանված կարգով ակտիվացրել է տոմսը և ստացել է Գովազդային վիճակախաղին մասնակցության իրավունք:

2.3. **Գովազդային վիճակախաղի ժամկետ**՝ 2024թ. հունիսի 05-ից մինչև 2024թ. հուլիսի 20-ը ներառյալ:

2.4. **Վճարում**՝ Telcell Wallet-ով մետրոպոլիտենի, ավտոբուսի և/կամ տրոլեյբուսի և/կամ օդանավակայանի ուղետոմսի դիմաց վճարում:

2.5. **Գովազդային վիճակախաղին մասնակցության էլեկտրոնային տոմս (այսուհետ՝ նաև Տոմս)՝** տոմս, որը տրամադրվում է սույն Կանոններով սահմանված կարգով Վճարում կատարելու դեպքում: Տոմսերը ստանում են եզակի, չկրկնվող համար՝ բաղկացած 7 թվից: Տոմսերը լինում եմ ակտիվ և պասիվ: Միայն ակտիվ Տոմսերն են Գովազդային Վիճակախաղին մասնակցության իրավունք տալիս, պասիվ Տոմսերը մասնակցության իրավունք չեն տալիս:

3. Գովազդային վիճակախաղին մասնակցության և վիճակախաղի անցկացման կարգը

3.1. Գովազդային վիճակախաղին մասնակցելու հնարավորություն ստանում է այն անձը, ով սույն Կանոնների համաձայն դարձել է Մասնակից:

3.2. Մասնակիցը կարող է ստանալ Տոմս՝ հետևյալ եղանակներով.

3.2.1. Telcell Wallet-ի Տրանսպորտ բաժնից մետրոպոլիտենի, ավտոբուսի և/կամ տրոլեյբուսի և/կամ օդանավակայանի յուրաքանչյուր ուղետոմսի դիմաց Վճարման դեպքում տրամադրվում է Տոմս՝ յուրաքանաչյուր ուղետոմսի համար 1 հատ հաշվարկով:

3.3. Եթե Telcell Wallet-ի օգտատերը ՀՀ իրավական ակտերով և Ընկերության սահմանած կարգով չի անցել նույնականացում՝ կցելով իր անձը հաստատող փաստաթուղթը և իր բանկային հաշվեհամարը և/կամ վճարային քարտը և/կամ Վիզա

թվային քարտը, այդպիսի Մասնակցին տրամադրված Տոմս(եր)ը համարվում է(են) պասիվ և չի(չեն) մասնակցում Գովազդային վիճակախաղին: Նման Մասնակիցը իրավասու է ակտիվացնել իր Տոմս(եր)ը՝ Ընկերության սահմանած կարգով անցնելով նույնականացում՝ իր անձը հաստատող փաստաթղթի և իր բանկային հաշվեհամարի և/կամ վճարային քարտի կցմամբ և/կամ Վիզա թվային քարտի բացմամբ:

3.4. Մասնակիցը Telcell Wallet-ի միջոցով ստանում է ծանուցում, որ մասնակցում է Գովազդային վիճակախաղին և ստացել է Տոմս, որը պարունակելու է նաև հղում Գովազդային վիճակախաղի պայմաններին:

3.5. Տոմսերը պատկանում են այն ստացող Մասնակցին և իրավունքներ են առաջացնում միայն այն ստացող Մասնակցի համար, և դրանք չեն կարող փոխանակվել կամ փոխանցվել այլ անձի:

3.6. Ընկերությունը ցանկացած պահի կարող է դադարեցնել կամ կասեցնել Տոմսերի տրամադրումը որևէ տեսակի Վճարման համար, ինչպես նաև սահմանափակել դրանց ստացման քանակը:

3.7. Եթե Վճարումը Ընկերության կողմից չեղարկվել է կամ համարվել է չկատարված, կամ Վճարման գումարը վերադարձվել է, ապա տվյալ Վճարման համար տրամադրված Տոմս(եր)ը համարվում է(են) անվավեր և Գովազդային վիճակախաղին մասնակցության իրավունք չի(չեն) տալիս:

3.8. Գովազդային Վիճակախաղի ավարտին անցկացվում է մեկ վիճակահանություն (այսուհետ՝ Վիճակահանություն):

3.9. Վիճակահանության շրջանակներում խաղարկվում է թվով 10 (տասը) հատ 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

3.10. Սույն օֆերտայի 3.9 կետում նշված շահումը Ընկերությունը հաղթող Մասնակցին տրամադրում է Telcell Wallet-ում բացված հաղթող Մասնակցի Վիզա թվային քարտի հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

3.11. Սույն օֆերտայի 3.9 կետում նշված շահումը Ընկերությունը հաղթող Մասնակցին բացառության կարգով կարող է տրամադրել այլ բանկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Վիզա թվային քարտը թողարկող բանկի կողմից հաղթող Մասնակցի Վիզա թվային քարտի բացման հայտը մերժվելու դեպքում:

3.12. Վիճակահանությունն իրականացվում է Տոմսի 7-անիշ համարի յուրաքանչյուր թիվը պատահականության սկզբունքով հետևյալ կերպ որոշելու միջոցով. 0-ից մինչև 7-ը (ներառյալ) թվերով նշագրված խաղաքարերը տեղադրվում են 7 պարկերում, արկղերում կամ այլ տարաներում: Պատահականության սկզբունքով պարկերից, արկղերից կամ այլ տարաներից դուրս են բերվում 1-ական (մեկական) խաղաքարեր, որոնց վրա նշագրված թվերով որոշվում է խաղարկության հաղթող համարը: Ընդ որում՝ առաջին դուրս բերված թիվը համարվում է հաղթող Տոմսի 7-անիշ համարի թվերից առաջինը և այդպես շարունակ՝ մինչև հաղթող համարի վերջին թիվը: Նախքան վիճակահանությունը դուրս են բերվում այն խաղաքարերը, որոնց վրա նշագրված թիվը չի կարող որոշել Վիճակահանությանը մասնակցող համարների հերթական համապատասխան թիվը:

3.13. Վիճակահանության արդյունքում հաղթող է ճանաչվում այն Մասնակիցը, ում Տոմսի թվերը դուրս կբերվեն, եթե այդ Տոմսը ակտիվ է, և Մասնակիցը Ընկերության աշխատակից կամ վերջինիս փոխկապակցված անձ չէ, Ընկերության՝ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում աշխատանքից ազատված աշխատակից չէ կամ ներառված չէ Ընկերության սև ցուցակում:

3.14. Ընկերությունը հաղթող Մասնակցին ծանուցում է հաղթող ճանաչվելու մասին՝ զանգահարելով այն հեռախոսահամարին, որով Մասնակիցը գրանցել է իր Telcell Wallet բջջային հավելվածը: Ընկերությունն իրավասու է 3 (երեք) անգամ զանգահարելուց հետո Մասնակցի չպատասխանելու դեպքում Վիճակահանությունը համարել չկայացած և կրկին անցկացնել նոր վիճակահանություն: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հաղթողի հեռախոսահամարին զանգը չհասնելու արդյունքում հաղթողի կողմից շահումը չստանալու համար:

3.15. Վիճակահանության հաղթող Մասնակիցը պարտավորվում է Վիճակահանության ավարտից հետո 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում անձամբ ներկայանալ Ընկերության գրասենյակ՝ ներկայացնելով իր անձը հաստատող վավեր փաստաթուղթ և իր հաղթող Տոմսը Telcell Wallet-ում, ինչպես նաև Մասնակիցը պարտավորվում է տալ համաձայնություն՝ տեսա-ձայնա-լուսանկարահանել շահումն ու շահողին և արդյունքը հավաքագրել, պահպանել և տարածել՝ գովազդային և օրինական այլ նպատակներով:Ընդ որում, Մասնակիցն իրավունք ունի հրաժարվել տրամադրել վերոնշյալ համաձայնությունը՝ հրաժարվելով շահումից:

3.16. Կանոնների 3.15 կետով նախատեսված գործողությունները Վիճակահանությունից հետո 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում հաղթող Մասնակցի չկատարելու դեպքում Ընկերությունը կարող է Վիճակահանության արդյունքները համարել չկայացած և չտրամադրել համապատասխան շահումը: Չտրամադրված շահումը մնում է Ընկերության հայեցողության ներքո:

4. Այլ պայմաններ

4.1. Ընկերությունն իրավունք ունի միակողմանի իր հայեցողությամբ իրականացնել սույն Կանոնների ցանկացած պայմանի ցանկացած փոփոխություն, որի մասին տեղեկացնում է իր www.telcell.am կայքում, Համացանցում իր պաշտոնական էջում և (կամ) Telcell Wallet բջջային հավելվածում:

4.2. Գովազդային վիճակախաղի Մասնակիցը սույնով տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի մարքեթինգային և օրինական այլ նպատակներով օգտագործել Մասնակցի տվյալները, որոնք Մասնակիցը տրամադրել է Ընկերությանը:

4.3. Ընկերությունն իրավունք ունի Մասնակցին ուղարկել տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ՝ թե՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, թե՛ նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով: Սույնով Մասնակիցը տալիս է նմանատիպ հաղորդագրություններ ստանալու համաձայնություն:

4.4. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել Մասնակցի տվյալների ստուգում՝ Ընկերության ներքին իրավական ակտերի համաձայն: Բացի այդ, Ընկերությունն իրավունք ունի Մասնակցից պահանջել ներկայացնել անձը հաստատող, ինչպես նաև Մասնակցին նույնականացնող անհրաժեշտ այլ փաստաթղթեր ու տվյալներ: Նույնականացնող փաստաթղթերի և տվյալների տեսակներն ու ներկայացման ձևերը սահմանում է Ընկերությունը:

4.5. Սույնով Մասնակիցը համաձայնում է, որ Telcell Wallet բջջային հավելվածում առկա հեռախոսահամարը սխալ, գոյություն չունեցող, չաշխատող, այլ անձի պատկանելու կամ խնդրահարույց այլ հետևանքներ առաջացնող լինելու դեպքում Ընկերությունը պատասխանատու չէ անբարենպաստ որևէ հետևանքի, այդ թվում նաև շահումը չտրամադրելու համար:

4.6. Ընկերության աշխատակիցները, վերջիններիս փոխկապակցված անձինք, վերջին 3 (երեք) տարվա ընթացքում աշխատանքից ազատված Ընկերության աշխատակիցները և Ընկերության սև ցուցակում ներառված անձինք իրավունք չունեն Գովազդային վիճակախաղի շրջանակներում շահող ճանաչվել և ստանալ շահում, նրանց տրամադրված Տոմսերը Գովազդային վիճակախաղին մասնակցության իրավունք չեն տալիս:

4.7. Ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում այն տեղեկատվության համար, որը Մասնակիցը մուտքագրում է, ինչպես նաև այն գործողությունների համար, որոնք իրականացվում են այդ տեղեկատվության հիման վրա: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում համապատասխան համակարգերի,

ինչպես նաև օգտագործվող կայքի, սոցիալական ցանցերի աշխատունակության համար և չի երաշխավորում դրանց անխափան աշխատանքը:

5. Ընկերության վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հարկային հաշվառում՝	ՀՎՀՀ 02703102
Վեբ-կայք՝	www.telcell.am
Էլ.հասցե՝	info@telcell.am
Հեռախոս՝	+374 (60) 27-22-25